ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի
N 106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) գործող հաստիքացուցակով հաստատված է 963 հաստիք և ելնելով այն հանգամանքից, որ 8 հաստիքի կրճատման և 17 նոր հաստիքի ավելացման կարիք կա՝ առաջարկում ենք կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխություն:

Հիմնարկի գործունեությունը ավելի արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև Գործառույթների հստակեցման և տարանջատման արդյունքում անհրաժեշտ է ձևավորել նոր ստորաբաժանում:

Կից ներկայացվում է կառուցվածքի և հաստիքացուցակի առաջարկվող տարբերակը:

Առաջարկվող փոփոխությունների հիմնավորումներն ըստ առաջարկվող հաստիքացուցակի՝

<u>Վարչական մաս</u>

<u>Հանրային կապերի պատասխանատու</u>

Հաշվի առնելով ՀԼՄ-ի, հանրության կողմից Հիմնարկին հասցեագրված տարաբնույթ հարցումները, ինչպես նաև Հիմնարկի գործունեությանը վերաբերող մամուլում պարբերաբար հրապարակվող նյութերը՝ Հիմնարկին անհրաժեշտ է մեկ **հանրային կապերի պատասխանատուի հաստիք,** ով լրատվամիջոցներին կտրամադրի հայտարարություններ, պարզաբանումներ, ըստ անհրաժեշտության կօժանդակի Հիմնարկի կողմից Երևան քաղաքի վարչական շրջաններում իրականացվող աշխատանքների լուսաբանման կազմակերպմանը:

Առաջարկվում է հանրային կապերի պատասխանատուի դրույքաչափը սահմանել՝ 340.000 ՀՀ դրամ:

<u>Նյութատնտեսական ապահովման բաժին</u>

Հաշվի առնելով, որ կառուցվածքում առկա է հերթափոխով աշխատող թվով 3 պահեստապետ, որոնք գտնվում են ավտոպարկի կառուցվածքի ներքո, իսկ Հիմնարկի հսկողության տակ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գտնվում են թվով 4 պահեստներ, ուստի ավտոպարկի անխափան աշխատանքներն ապահովելու և 24/7 գրաֆիկով ավտոմեքենաների վերանորոգող վարպետներին անհրաժեշտ պահեստամասերով ապահովելու ու Հիմնարկի աշխատանքների կազմակերման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրելու, պահեստների գործառույթների ապահովումն ու համակարգման հսկողությունն արդյունավետ, վերահսկելի իրականացնելու նպատակով, առաջարկվում է ավտոպարկից տարանջատել թվով 3 պահեստապետերի և աղբահանության բաժնից 3 բանվորների հաստիքները, յուրաքանչյուր պահեստապետի կցելով մեկական բանվոր, միավորել նոր ձևավորվող **Նյութատնտեսական ապահովման բաժնին**, հետևյալ հաստիքներով, բաժնի պետ՝ դրույքաչափը սահմանելով 500.000 ՀՀ դրամ, պահեստապետ (թվով 3)՝ դրույքաչափը սահմանելով 400.000 ՀՀ

դրամ, բանվոր (թվով 3)՝ հաշվի առնելով պահեստի բանվորի ֆիզիկական ծանր աշխատանքը, դրույքաչափը սահմանել 300.000 ՀՀ դրամ:

<u>SS և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին</u>

Գործող կառուցվածքում առկա է Բաժնի պետի, GPS համակարգի պատասխանատուի (թվով 1) և համակարգչային տեխնիկայի օպերատորի (թվով 6) հաստիքներ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հիմնարկն աշխատում է 24/7 գրաֆիկով և անհրաժեշտություն է առաջացել աղբահանության և սանմաքրման բաժինների վրա սահմանել ամբողջական էլեկտրոնային վերահսկողություն (տեխնիկայի և մարդ ուժը վերահսկելու առումով), յուրաքանչյուր բաժնի վրա ունենալով SS և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժնի մեկական աշխատակից: Այդ աշխատակիցները պետք է կորդինացնեն աշխատանքները, բացահայտեն սահմանված երթուղիներից շեղումները և կարգավորեն դրանք, ավտոմեքենաների վրա տեղադրված սարքերի միջոցով արձանագրեն ավտոմեքենաների թերությունները և դրանք փոխանցեն համապատասխան բաժնին՝ դրանք վերացնելու նպատակով:

Ուստի անհրաժեշտ է հավելյալ 3 հաստիքներ, որոնք առաջարկվում է կրճատել աղբահանության բաժնի գծային պատասխանատուների հաստիքից, օպտիմալացման արդյունքում աղբահանության բաժնի կրճատվող 3 հաստիքը կավելացվեն SS և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժնին:

Դրույքաչափը սահմանելով ՝ 300.000 ՀՀ դրամ:

<u>Աղբահանության բաժին</u>

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնարկում ներդրվել է էլեկտրոնային կառավարման և վերահսկողության մեխանիզմներ, ուստի՝ առաջարկվում է կրճատել 3 գծային պատասխանատուի և 8 բանվորի հաստիք:

<u>Ավտոպարկ</u>

Հաշվի առնելով, որ այն հանգամանքը, որ Երևանի քաղաքի պատշաճ սանիտարական մաքրումն ապահովելու նպատակով Հիմնարկի պարկը համալրվելու է 12 նոր <<Կարչեր>> տեսակի բազմաֆունկցիոնալ տրանսպորտային միջոցներով, ուստի առաջարկվում է սահմանել թվով 12 բազմաֆունկցիոնալ փոքր տեսակի տրանսպորտային միջոցների վարորդների հաստիքներ, դրույքաչափը սահմանելով 407.000 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի _____._____-ի
N _____ - Ա որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2019 թվականի հունիսի 17-ի
N 106- Ա որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

h/h	Կառուցվածքային ստորաբաժանման անվանումը
1	Սանմաքրման բաժին
2	Աղբահանության բաժին
3	Ավտոպարկ
4	Տեխնիկական սպասարկման բաժին
5	Ֆինանսատնտեսագիտական բաժին
6	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
7	ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին
8	Նյութատնտեսական բաժին

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

դրամ

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Աշխատակազմ			
1	Տնօրեն	1	850,000	850,000
2	Տնօրենի տեղակալ	2	650,000	1,300,000
3	Գլխավոր ինժեներ-ավտոպարկի պատասխանատու	1	650,000	650,000
4	Իրավաբան-խորհրդատու	1	500,000	500,000
5	Տնօրենի օգնական	1	300,000	300,000
6	Գործավար	1	250,000	250,000

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
7	Վերահսկող	6	300,000	1,800,000
8	Հավաքարար	2	190,000	380,000
9	Պահակ	4	200,000	800,000
	Ընդամենը	**19**		**6,830,000**
	Մասնագիտական բաժիններ			
	Սանմաքրման բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	Հերթափոխի պետ-բաժնի պետի տեղակալ	2	400,000	800,000
3	Խմբավար պատասխանատու	21	300,000	6,300,000
4	Հավաքարար	370	200,000	74,000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**394**		**81,600,000**
	Աղբահանության բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	Հերթափոխի պետ-բաժնի պետի տեղակալ	2	400,000	800,000
3	Գծային պատասխանատու	19	300,000	5,700,000
4	Բանվոր	234	261,000	61,074,000
5	Աղբամաններն ախտահանող և վերանորոգող բանվոր	6	261,000	1,566,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**262**		**69,640,000**
	Ավտոպարկ			
1	Ավտոպարկի հերթափոխի պետ (3 հերթափոխ)	3	350,000	1,050,000
2	Տեխզննող-դիսպետչեր	4	290,000	1,160,000
3	Աղբատարի վարորդ	135	380,000	51,300,000
4	Բազմաֆունկցիոնալ մեքենայի վարորդ	65	320,000	20,800,000
5	Բազմաֆունկցիոնալ փոքր մեքենայի վարորդ	12	407,000	4,884,000
6	Բեռնատարի վարորդ	4	320,000	1,280,000
7	Աշխատակիցներին սպասարկող վարորդ	2	290,000	580,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**225**		**81,054,000**
	Տեխնիկական սպասարկման բաժին			
1	Բաժնի պետ-գլխավոր մեխանիկ	1	500,000	500,000
2	Վարպետ	13	490,000	6,370,000
3	Զոդող	2	410,000	820,000
4	Ներկարար	2	350,000	700,000

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիք-ների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
5	Խառատ	2	350,000	700,000
6	Ավտոէլեկտրիկ	3	350,000	1,050,000
7	Տեխնիկական բանվոր	16	261,000	4,176,000
8	Ավտոլվացող	4	250,000	1,000,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**43**		**15,316,000**
	Օժանդակող բաժիններ			
	Ֆինանսատնտեսագիտական բաժին			
1	Բաժնի պետ - գլխավոր հաշվապահ	1	650,000	650,000
2	Հաշվապահ	4	350,000	1,400,000
3	Գնումների մասնագետ/համակարգող	2	400,000	800,000
	Ընդամենը	**7**		**2,850,000**
	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	ՄՌԿ համակարգող մասնագետ	1	400,000	400,000
3	Մասնագետ	1	250,000	250,000
	Ընդամենը	**3**		**1,150,000**
	ՏՏ և էլեկտրոնային հսկողության համակարգի բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	GPS համակարգի պատասխանատու	1	400,000	400,000
3	Համակարգչային տեխնիկայի օպերատոր	9	300,000	2,700,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**11**		**3,600,000**
	Նյութատնտեսական բաժին			
1	Բաժնի պետ	1	500,000	500,000
2	Պահեստապետ (3 հերթափոխ)	3	400,000	1,200,000
3	Պահեստի բանվոր	3	300,000	900,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7**		**2,600,000**
	ԱՄԲՈՂՋԸ	**971**		**264,640,000**

»